

|                       |          |         |             |   |            |             |
|-----------------------|----------|---------|-------------|---|------------|-------------|
| ՀԱՐԻԻՐԱԼԻԿԻՐ          | 10       | 100     | 1000        | = | Քիլէ       | Ք. Քանդար   |
| Տանորդալիզը           |          | 10      | 100         |   | 2.703      | 2 — 5,62    |
|                       |          | 1       | 10          |   |            |             |
| ԼԻԿԻՐ                 |          | Լիզը    | Տանորդալիզը | = | Քիլէ       | Քութու      |
|                       |          | (Եւլէ+) | (Ձ-րՔ)      |   | 0.02 765   | 0.22        |
| ՄԵԿԻՐԱԿԱՆ ՏԱԿԱՌԱՅ. 10 |          | 1000    | 1 000 000   | = | Քանդար     | Օբ. ՏիրհէՄ  |
| ԿԵՆԳԻՆԱՐ              | Կենդինար | 100     | 100 000     |   | = 17.71492 | = 779 — 183 |
| ՔԻԼՈԿՐԱՄ              | Քիլիկրամ |         | 1000        | = | Օբ.Քա      | Տիր. զըռաթ  |
|                       |          |         | Կրամ        |   | 0.779      | 311 — 12.52 |
|                       |          |         |             |   | Քըռաթ      |             |
|                       |          |         |             |   | 4.988 5    |             |

**Ձ Ա Ն Ա Ձ Ա Ն Գ Ի Տ Ե Լ Ի Ք**

Անումն փոսկիաց և ուրիշ կարգապահան ազգաց: — Համեմատելով Փոսկիաց սերընդեան աճումն ուրիշ կարգապահան ազգաց հետ, գրեթէ ամենէն վար կամ ամենէն նուազ կը գտնուի. և իրենց ամեն տնտեսազիւրը կը բողբեն այս բանիս վրայ, բարոյականի նուաստութենէն առաջ եկած համարելով: Ոմանք մասնաւոր բնութեամբ և հաշուով ցուցած են հետեւեալ համեմատութիւնները, կենաց տնտեսութեան զանազան վիճակաց վրայ:

Հազար անձի վրայ ՚ի Ռուսաստան կ'ըլլան ամուսնութիւնը 10. ՚ի Սաքսոնիա 8,5. Բրուսիա 8,1. Տանիմարգա 8, 1. յԱնգլիա 8. յԱւստրիա 7,8. Հոլանտա 7,7. Փոսկիաստան 7,7. Սպանիա 7,7. Նորուեկիա 7,7. Շուետիա 7,6. Պելճիա 6,5. Բորդուզալ 6,5. Պաւիերա 6,2:

Հարիւր ամուսնութեանց զաւակը կ'ըլլան ՚ի Հոլանտա 488. Նորուեկիա 470. Բրուսիա 460. Պաւիերա 455. Շուետիա 452. Սաքսոնիա 455. Անգլիա 455. Պելճիա 425. Տանիմարգա 418. Փոսկիաստան իբր 500:

Հարիւր հոգւոյ վրայ կը ծնանին ՚ի Ռուսաստան 4,77. Սաքսոնիա 4,05. Բրուսիա 3,98. Աւստրիա 3,68. Սպանիա 3,64. Նորուեկիա 3,50. Տանիմարգա 3,28. Հոլանտա 3,27. Շուետիա 3,25. Պաւիերա 3,24. Անգլիա 3,22. Բորդուզալ 3,10. Պելճիա 3,05. Յունաստան 2,88. Փոսկիաստան 2,55:

Միլիոն անձի վրայ ծնածներուն թիւն կ'աւելնայ քան զմեռելոց ՚ի Նորուեկիա 13,900. Բրուսիա 13,600. Սաքսոնիա 12,700. Ռուսաստան 11,800. Շուետիա

11,500. Անգլիա 11,200. Տանիմարգա 10,400. Աւստրիա 9,500. Սպանիա 8,800. Բորդուզալ 8,500. Հոլանտա 8,000. Պելճիա 7,700. Փոսկիաստան 2,400:

Յայտնի կ'երևի որ ՚ի Փոսկիաստան եթէ ամուսնութեանց թիւն յետինն չէ՛ այլ սերնդեան կամ զաւակաց յիշութիւն ամենէն յետինն է. և այս համեմատութեամբ իր այժմեան բնակչաց թիւն կրկնապատիւն ունենալու համար՝ 170 տարի պէտք է իրեն, մինչդեռ Բրուսիոյ համար 42 տարի բաւական է, Անգլիոյ՝ 52, Ռուսիոյ 66:

Թիւ ընակչաց զարգացումը քանակաց: — Յետ վերոյգրեալ համառոտ տեղեկութեան կամ յիշատակի մարգաթուի Փոսկիաց, համարիմք թէ հետաքննելի ըլլայ անոնց իշխանութեան տակ եղած օտար երկիրներու բնակչաց թիւն ալ նկատել. որ էր ըստ վերջին վիճակադրութեան 1868 տարւոյ՝ այսպէս.

|                         |           |
|-------------------------|-----------|
| Ալճերի (ճէզայիր)        | 2,913,000 |
| Գոչինչին                | 1,204,000 |
| Հնդկաստան Փոսկիաց       | 260,000   |
| Մարդինիկա կղզի          | 151,000   |
| Կուատալուի              | 126,000   |
| Միզլուն և Ս. Պետրոս     | 5,100     |
| Կիւյան Փոսկիաց          | 25,150    |
| Ժողովոյ (Réunion) կղզիք | 178,000   |
| Սենեկալ                 | 206,000   |
| Մատակասդար              | 22,000    |
| Թայիլի և մերձաւոր կղզիք | 52,500    |
| Նոր Գալետոնիա           | 5,000     |
| <hr/>                   |           |
| 5,127,550               |           |

Նոր կրկարողի ընդ մէջ կրկուց Ովկիանուց — Միաբան Նահանգաց՝ Երկնց մայրաքաղաք Նոր Եօթէն յԱտլանդեան Ովկիանոսէ մինչև Ի Ս. Ֆրանչիսկոյ քաղաք Գալիֆոռնիոյ՝ յեզր Խաղաղական Ովկիանու՝ ձգած երկաթի ճամբան՝ զարմանալի արագութեամբ և ճարտարութեամբ, 5505 մղոն (անգղիական) երկայնութիւն ունի. զոր շտգեմար կառք քիչ օրուան մէջ կտրելով՝ ճամբորդները տարբեր և հեռաւոր կլիմայից և աշխարհաց կը հասցընեն, անբաւ կամ անկռելի ինն գիւրութիւն ընելով անոնց։ Բայց մարդ հիմա գոչ չըլլար որ և է երագութեան և գիւրութեան չափով. աւելի կարճ և շուտ կը փափաղի, կամ աւելի մօտ. գուցէ քիչ մ'ալ ազգային նախանձ խառնուի փափագանաց մէջ. որով ալ ըլլայ, հիմա Միգղիացիք և Գանատացիք կը

պատրաստուին նոր զիծ մը ձգել երկուց Ովկիանուց մէջ, Գանատայի մայրաքաղաք Մոնրէպէն ինչուան յափուս անգղիական Գոլումպոյ, որ պիտի ըլլայ 2777 մղոն երկայն, հետեւաբար 528 մղոն կարճ քան զանաջինն։ Ծախք շինութեան հաշուած է 625 միլիոն ֆրանգ. կէսն երաշխաւորած է Միգղիական տէրութիւնն, միւսն ալ Գանատայի տէրութիւնն, որ և արգէն 150 միլիոն սահմանած է իր բաժնի գծին համար։

Աշխարհիս կրկարողաց շարքակաւ երկայնարիւնը — Աշխարհքիս երկաթուղեաց բոլորական երկայնութիւնն էր 1875 տարուոյն մէջ իբր 190,000 քիլոմետր. արժէր են իբրև 56 հազար միլիոն ֆրանք, և կը բաշխուին հետեւեալ համեմատութեամբ.

|                         |          |         |               |                    |
|-------------------------|----------|---------|---------------|--------------------|
| Եւրոպա . . . . .        | Քիլոմետր | 97,660  | Գին շինութեան | 41,261,950,000 ֆր. |
| Ամերիկա . . . . .       | »        | 89,959  | »             | 12,165,945,000 »   |
| Ասիա . . . . .          | »        | 7,158   | »             | 2,075,915,000 »    |
| Աւերիկէ . . . . .       | »        | 952     | »             | 274,685,000 »      |
| Աւստրալիա և Հնդկ. կղզիք | »        | 1,974   | »             | 501,005,000 »      |
|                         |          | <hr/>   |               | <hr/>              |
|                         |          | 489,691 |               | 56,275,500,000     |

Մէկ քիլոմետր շինութեան զինն եզեր է, միջական հաշուով, 500,000 ֆրանք. բայց բոտ տեղեաց տեղեաց աւելի կամ պակաս եղաւ այս գումարէն. վասն զի երկիրը, աշխատանքն ու առաջններն ամեն տեղ նոյն զինը չունէին։ Հետեւեալ թիւերը կը ցուցընեն մէկ քիլոմետր երկաթուղուոյն միջին զինը՝ աշխարհքիս այլ և այլ կողմերը։

|                     |             |
|---------------------|-------------|
| Եւրոպա . . . . .    | 422,000 ֆր. |
| Ամերիկա . . . . .   | 148,000 »   |
| Ասիա . . . . .      | 289,000 »   |
| Աւերիկէ . . . . .   | 294,000 »   |
| Աւստրալիա . . . . . | 205,000 »   |

կապէ Մոնկոմէրին և Նոր-Օւէանը, և 20 քիլոմետր ճամբայ կը կարճըցունէ Մոսկիւէն դէպ Ի Մոնկոմէրի երթալու։

Նորակերտ կամուրջ Հռենոսի վրայ — Ներկայապէս երկաթուղուց համար Հռենոս գետոյն վրայ շինուած կամուրջն Ի Վեսել, Եւրոպայի առաջին կամրջաց մէկը պիտի ըլլայ, և որոյ երկայնութիւնը պիտի գերազանցէ Գոպլենցայ ու Մայենցայ կամուրջները։ Այն կէտին վրայ յորում կը շինուի Հռենոսի լայնութիւնն 420 մետր է. բայց որովհետեւ ափունքը ցած է, և Ի բայց որովհետեւ ափունքը ցած է, և Ի բայց գարնան կ'ողողէ բոլոր զըջակայս, անոր համար կամուրջին երկայնութիւնը 1915 համար կամուրջին երկայնութիւնը 1915 մետր պիտի ըլլայ, թէ ողողմանց առջին բաւական միջոց բանալու, և թէ Ի միջաբաւական միջոց բանալու համար, որպէս զի Ի վեր բարձրացնելու համար, որպէս զի նաւերը կարենան համարձակ երթել ելել։ Կամուրջին այն մասն որ անմիջապէս գետոյն վրայէն պիտի անցնի, ահազին մեծուտոյն վրայէն պիտի անցնի, ահազին մեծութեամբ երեք խարսխաց վրայ պիտի յենու, թեամբ երեք խարսխաց վրայ պիտի յենու, ձևացնելով։ Ասոր շինութիւնն սկսաւ 1872 տարուոյն երկրորդ եռամսէին, և պիտի տւարտի դալ տարի Զատիկին մօտերը։

Աշխարհիս ամենեւեկ երկայն կամուրջը — Աշխարհքիս ամենեւեկ երկայն կամուրջը շինուած է Մամերիկա, և ձգուած է Գենասա և Մոսկիւ գետոց վրայ, 24 քիլոմետրէն աւելի երկայնութեամբ, որուն վրայէն կ'անցնի Մոսկիւէն դէպ Ի Մոնկոմէրի երթալու երկաթուղին։ Այս կամուրջը փայտեայ է և երկաթի զլանածե սիւներու վրայ հաստատուած, որոնք կը հանգչին ցեցերու վրայ, որ աւազին ու խճին մէջէն անցնելով կ'երթան կը հասնին մինչև կախուղ հողուն տակը։ Երեք տարուան մէջ շինուեր է այս կամուրջը, և ծախքը 7,500,000 ֆր. եզեր է։ Այս կամուրջը մէկմէկու հետ կը

Վաճառահանական վիճակագրորդը: — Կիւ-Եօքըր վաճառահանական օրագիր մը կ'ըսէ թէ վիճակագրական մտադիր քննութեամբ ցուցաւ որ գրեթէ քսան տարուան մէջ աշխարհքիս տասնութէկ վաճառահանական աղգերն, Սնդղիա, Միացեալ-Նահանգք, Գաղղիա, Գերմանիա, Պելճիա, Աւստրիա, Ռուսիա, Իտալիա, Սպանիա, Հոլանտա և Շուէտ, կրկնապատկեցին իրենց վաճառահանութեան ասպարէզը:

Եւ իրաւցնէ յամին 1855 այն տասնութէկ տէրութեանց արտաքին վաճառահանութիւնը 21,208,500,000 Ֆրանքաց էր, բայց մինչև ցամա 1875 զգալի կերպով աճեցաւ և եղաւ 46,580,000,000 Ֆրանքաց:

Այս տասնութէկ տէրութեանց բնակչաց թիւն որ 1855ին 271 միլիոն էր, 17 տարուան մէջ, այսինքն մինչև ցամա 1875 բազմացաւ և եղաւ 314 միլիոն:

1855ին արտաքին վաճառահանութեան արդիւնքը կը հաշուէր 78 Ֆրանք մարդ գլուխ, իսկ 1875 ամին վաճառահանութիւնը կը հաշուէ 148 Ֆրանք մարդ գլուխ:

Վիճակագրորդը մարդկութեան: — Մարդկային կենաց միջին տևականութիւնն է 59 տարի:

Մինչև 50 տարի ասրողը, կրնայ յուսալ որ հաւանաբար ց71 տարի երկարի կեանքը: Մեռելոց թիւը կենդանեաց թուոյն հետ այնպէս կը համեմատի ինչպէս 1 առ 33: Այսպիսի ենթադրութեամբ հաշուելով ծանօթ աշխարհաց բնակչաց թիւը որ է իբր 700 միլիոն, կը հանեմք այս յետագայ հետևութիւնը:

Մեռելոց տարեկան թիւն ընդ ամենայն երկիր է 21 միլիոն, օրը 68 հազար, ժամը 2,400 և վայրկեանի մէջ 40 հոգի:

Ծննդոց թիւը շատ աւելի է քան զմեռելոցը, միջին հաշուով 1 առ 20: Այսպիսի անհաւասարութեամբ յայտնի կը տեսնուի որ եթէ ժամանակ առ ժամանակ մահտարածամբ և պատերազմունք չի հաւասարակուէին ծնելոց թիւը մեռելոց թուոյն հետ, տարին գրեթէ 2,516,629 կ'աւելնար աշխարհիս բնակչաց թիւը. և հարիւր տարուան մէջ 500 միլիոնի կը հասնէր:

Փորձն հիմնեալ ճշմարտ հաշուի վրայ, կ'ապացուցանէ որ բազմատեսակ մահուց պատճառաւ որ պարբերաբար կը տեսնուին ՚ի վերայ երկրի, մարդկութիւնն շատ դանդաղութեամբ կ'աճի:

Նահանգ բիրտն: — Բսենտիոնի պատմագրութեան մէջ աւանդեալ յունական տասն հազար զինուորաց նահանջման

դէպքն երկար քննութեանց նիւթ եղած է ամեն քաջամուտ բանասիրաց և աշխարհագիտաց: Երկու անգղիացիք Հէմիլդըն և Ինդուըրտհ (Ainsworth) ճանապարհորդք քննած են նոյն խնդիրն անմիջապէս տեղեաց վրայ, հրատարակելով իրենց մանրաբնին հետազոտութեանց արդիւնքը. սակայն քանի մը սխալներէն զատ ինչ ինչ ընդ երկրացութեամբ թողած են: Մի և նոյն խնդիրը դարձեալ ՚ի քննութիւն առաւ վերջերս Փելլըս Ռուպիոն (Rubion), և աշխարհագիտական ու պատմական տեղեկութեամբ խորաբնին դրոյղի մը հրատարակեց: Այս անձն թէպէտ և այն տասն հազար դիւցադանց կտրած անցած աշխարհներն ուղևորելու և անձամբ քննելու բախտը չունեցաւ, բայց ծովածաւալ հըմտութեամբ ՚ի խորս թափանցելով Նահանջման գրոցն և օգնականութեամբ աշխարհացոյց տախտակաց, յաջողեցաւ քննել առաջնոց մէկ քանի սխալներն և պարզել բազում երկրացութիւններ: Երեք աշխարհացոյց տախտակ շինեց, հետևելով մօտերս հրատարակուած հին և նոր Ասիոյ աշխարհացոյց տախտակաց, և դժեց տասն հազարաց ըրած ճանապարհը: Ըստ այս դժին եթէ ուղենամք քաջայաղթ փառանդին քայլըցը հետևել պիտի անցնիմք ընդ Լիբէաստան, Փոիւզիա, Կիլիկիա, Սսորեստան, Միջագետս, Բաբելոնստան մինչև ՚ի Կիւնարոս, որ է վերջին կէտ արշաւանայն. և ապա եթէ դառնամք յԵրոպա՝ պիտի հատանեմք զԱստրիա, զԵւրասիոյ Կորդուոց, զՀայաստան, զՏայս, զԿողքիս և զՊոնտոս: 1

Հսկայաշէն ստորերկրեայ նոր անցք: — Մարդոց կորովոյն և կարողութեանը մեծամեծ յիշատակարաններէն մէկն ալ պիտի ըլլայ Մատեայց ստորերկրեայ անցքն յԱմերիկա: Այս լեռները ծակելով պիտի անցնի Լիմայէն դէպ ՚ի Օույեա զնացող երկաթուղին:

Այս ստորերկրեայ ճամբան, որ ծովուն երեսէն 5000 մեդր բարձրութեան վրայ կը շինուի, պիտի ունենայ 1000 մեդր երկայնք: Շինութիւնն առաջ կը վարուի զարմանալի երազութեամբ, և կը կատարեն զայն հընդիկ գոշի (coolis) ըսուած գործաւորները. վասն զի ասոնք միայն կրնան ապրիլ այն բարձրութեան վրայ, ուր օդն ամենանորը ըլլալով ուրիշ ցեղէ գործաւորք չեն կրնար ստիպալ:

1 Այս խնդրոյ վրայ ընդարձակ տեղեկութիւն ունենալ ուղղոյն ընթեռնու Հ. Ղևոնդ Վ. Սլիւշան Յանքիս. հատ. Բ. 201: